— Այդ մարդիկը, ասենք թէ, օտարներ են, դու խօ իմ տան բոլոր ծակուծուկը գիտես, ինչո՞ւ չէիր տեղ ցոյց տալիս: — Նա դարձաւ դէպի մեզ, ասելով, — եկէք:

Նա տարաւ մեզ մի երեսը բաց սրահ (էյվան), որ նայում էր դէպի պարտէզը: Սրահի բաց կողմը բաժանուած էր պարտէզից փայտեայ վանդակապատով, իսկ նրա միջից բացւում էր մի դուռ դէպի միւս սենեակները: Սրահը տան ամառնային կեցութեան համար էր:

— Աղջի, Ծովինար, ո՞ւր ես, — ձայն տուեց նա:

Սենեակի դուռը բացուեցաւ, եւ ներսից յայտնուեցաւ մի գեղեցիկ աղջիկ, տասնչորս տարեկան, որի արախչինը ամբողջապէս ծածկուած էր արծաթեայ եւ ոսկեայ դրամներով եւ թասի ձեւ էր ստացել: Արախչինի տակից սփռուած էին նրա թիկունքի վրայ, առանց հիւսերի, արձակ ծամերը եւ կիսով չափ սքօղում էին նրա թուխ դէմքը: Աղջիկը աւելի քաղաքավարի գտնուեցաւ, քան թէ հայրը. երբ որ տեսաւ մեզ, հեռուից գլուխ տուեց եւ լուռ կանգնեց, սպասելով հօր հրամանին:

— Բեր այստեղ մի շոր քցիր, որ այդ մարդիկը նստեն, — ասաց հայրը:

Աղջիկը շուտով ջուր բերեց, ճարպիկ մատներով սրսկեց սրահի կաւով ծեփած յատակի վրայ, յետոյ տարածեց եղէգներից հիւսած ընդարձակ հասիրը, իսկ նրա վրայ՝ մի քանի նախշուն կապերտներ: Մենք կանգնած սպասում էինք, մինչեւ նա իր գործը վերջացնի:

— Մի մինդար էլ բեր այդ պարոնի համար, — նա ցոյց տուեց Ասլանի վրայ, — այդ պարոնը ֆրանկ է, նրա տեղը պէտք է փափուկ լինի, իսկ մենք չոր գետնի վրայ էլ սովոր ենք նստել:

Աղջիկը ներս վազեց, բերեց մինդարը, տարածեց իր պատշաճաւոր տեղում: Ասլանը նստեց, իսկ ես ոտքի վրայ կանգնած մնացի:

— Դու ինչո՞ւ այդպէս ցցուած մնացիր, կարծես փայտ է կուլ տուել, նստել չէ կարող, — ասաց մեր հիւրընկալը եւ, տեսնելով, որ ես փոքր-ինչ ծանր շարժուեցայ, բռնեց իմ ոտից եւ իր ձեռքի երկաթի ծանրութեամբ համարեա թէ ինձ թխեց կապերտի վրայ:

Ես չգիտէի ինչպէս ընդունել այդ վայրենի փաղաքշանքը: Ես սաստիկ բարկացայ, մանաւանդ երբ տեսայ, որ սիրուն աղջիկը ձեռքով աչքերը բռնեց եւ ծիծաղելով փախաւ միւս սենեակը: Ես իմ մտքում արդէն սկսել էի տրտնջալ վարպետ Փանոսի վրայ: Ինչո՞ւ այստեղ բերեց մեզ, միթէ՞ ամբողջ գիւղում մի օրինաւոր տուն չկար: Բայց Ասլանի դէմքի վրայ դժգոհութեան նշաններ չէին երեւում: